

ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ

ԱՄԵՆ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊՍ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՄԷՋ

Զորերշարթի, 22 Փետր.ի կէսօրէ վերջ ժամը 4-ին, Պէյրութէն Ս. Աթոռ ժամանեց Թուրքիոյ Հայոց Պատրիարք, Ն. Ամենապատուութիւն Տ. Գարեգին Արքեպս. Խաչատուրեան: Իրեն կ'ընկերանային Հիւս. Ամերիկայի առաջնորդ Գեր. Տ. Մամբրէ Արքեպս. Գալիֆայեան, Ս. Աթոռիս նորապսակ եպիսկոպոսներէն Եւրոպայի թեմին Կաթողիկոսական Պատուիրակ Գեր. Տ. Սերովրէ Եպս. Մանուկեան եւ Գալիֆորնիոյ թեմին առաջնորդ Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան: Սրբազան Պատրիարքն ու Գեր. Սրբազանները վանքի աւագ դռնէն «Հրաշափառ»ով առաջնորդուեցան Մայր Տաճար, ուր Ս. Գլխադրի վրայ կատարելէ հտը իրենց ուխտը բարձրացան Պատրիարքարան: Ներկայ էին այս առթիւ օտար յարանուանութեանց ներկայացուցիչներ եւ այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ: Պատրիարքարանի դահլիճին մէջ՝ խօսք առաւ Սրբազան Պատրիարքը՝ որ Տեղապահ Տ. Եղիշէ Արքեպս.ի արժանիքները դրուատելով, նմանութեան հզր մը գտաւ



Ամենապատիւ Տ. Գարեգին Սրբազան Պատրիարք Հայր, շքապատուած բարձրաստիճան եկեղեցականներէ Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ:

Երանաշնորհ Տ. Եղիշէ Դուրեան Պատրիարքին եւ՛ իր աշակերտին միջեւ: — Սրբազան Պատրիարքը մօտ տասը օրեր հիւրը եղաւ Ս. Աթոռոյս, որուն ընթացքին այցելութիւն տուաւ Ս. Աթոռոյս զոյգ վարժարաններուն, ինչպէս նաեւ Բեթղեհէմի Ս. Ծննդան Տաճարին, ուր տեղի ունեցաւ պատշաճ ընդունելութիւն, եւ այլ Սրբատեղիներ: Նախագահեց նաեւ եկեղեցական կարգ մը հանդիսութեանց:

Շաբաթ 3 Մարտին, Սրբատեղիները այցելած ըլլալու գոհունակութեամբ, Սրբազան Պատրիարքը մեկնեցաւ դէպի Գահիրէ, ընկերակցութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր եւ այլ Սրբազաններու, իր մասնակցութիւնը բերելու համար Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին նախագահութեամբ գումարելիք Ազգային-եկեղեցական ժողովին: